

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 21/3**

**2 հունիսի 2015 թ.**

Քննարկվեց «ՊԱՍԱ-ՀԾ» ՍՊԸ 11.05.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 28.04.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 283077 որոշման դեմ:

#### **«ՊԱՍԱ-ՀԾ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

Ըստ գանգատի, 2015 թ-ի փետրվարի 16 «ՊԱՍԱ-ՀԾ» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) կողմից էլեկտրոնային եղանակով ուղարկվել է հունվար ամսվա եկամտային հարկի հաշվետվությունը, սակայն հարկային մարմնի ծրագրում նշված հաշվետվությունը արտացոլվել է որպես 2014 թ-ի դեկտեմբեր ամսվա համար ներկայացված: Տվյալ դեպքում տեղի է ունեցել տեխնիկական սխալ, որում ընկերության մեղքը բացակայում է:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է հարցին տալ դրական լուծում:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ընկերության կողմից 2015 թ-ի փետրվարի 16-ին էլեկտրոնային եղանակով ներկայացվել է 2015 թ-ի հունվար ամսվա եկամտային հարկի հաշվարկը, սակայն ՀՀ ՖՆ «Հարկատու 3» տեղեկատվական բազայում այն արտացոլվել է որպես 2014 թ-ի դեկտեմբեր ամսվա եկամտային հարկի ճշգրտված հաշվարկ: Այնուհետև, ընկերության կողմից 2015 թ-ի փետրվարի 27-ին ներկայացվել է 2015 թ-ի հունվար ամսվա եկամտային հարկի ճշգրտված հաշվարկը, որը ՀՀ ՖՆ «Հարկատու 3» տեղեկատվական բազայում արտացոլվել է որպես հունվար ամսվա համար ներկայացված հերթական եկամտային հարկի հաշվարկ: Վերջինս ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ կողմից դիտվել է որպես հունվար ամսվա համար սահմանված ժամկետից ուշ ներկայացված:

Նշված դեպքի կապակցությամբ Աշտարակի ՏՀՏ կողմից հարուցվել է վարչական վարույթ, որի արդյունքում Աշտարակի ՏՀՏ պետի 28.04.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 283077 որոշմամբ ընկերության տնօրենը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամ:

Սույն գործին առնչվող փաստերի հանգամանալից ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ իրականում ընկերությունը 2015 թ-ի փետրվարի 16-ին, այսինքն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, էլեկտրոնային եղանակով ներկայացրել է 2015 թ-ի հունվար ամսվա եկամտային հարկի հաշվարկը, սակայն ՀՀ ՖՆ «Հարկատու 3» տեղեկատվական բազայում առկա տեխնիկական խնդիրների

հետևանքով 2015 թ-ի հունվար ամսվա համար ներկայացված եկամտային հարկի հաշվարկը արտացոլվել է որպես 2014 թ-ի դեկտեմբեր ամսվա եկամտային հարկի ճշգրտված հաշվարկ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված խախտման առկայության համար անհրաժեշտ է, որպեսզի ընկերության տնօրենի կողմից զանցանքը կատարված լինի մեղավորությամբ: Հետևապես իրականացվող վարչական վարույթի ընթացքում նախ պետք է պարզվեր ընկերության տնօրենի վարքագծում մեղքի առկայության փաստը, ինչը, սակայն, քննարկվող դեպքում չի կատարվել:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ քննարկվող դեպքում կիրառելի չէ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվությունը, քանի որ զանցակազմը լիարժեք չէ, արարքի սուբյեկտիվ կողմի՝ մեղքի բացակայության պատճառով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Բեկանել ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 28.04.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 283077 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

**Հանձնաժողովի նախագահ՝**

